ցին զպարտամուրհակսն առ Դատաւորն, և նա արձանագրէր զԹիւ գումարաց և 'ի վերջոյ պահանջէր 'ի Հայոց զ10,000 դահեկանս իբր տասանորդ. ապա յաւելեալ 'ի վերայ նորա զայլ և այլ պահանջս՝ եհաս գումարն 18,000, յաւելին եւ միւս այլազգիք 'ի վերայ նորա 18,000 եւս, եղեւ գումարն 36,000, որոյ վասն եռուն Խորհրդականք փոխանակագիր հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, և եթէ յետս դարձցի, եղիցի գումարն 70,000, և այլազգիք 'ի վաճառ հանեալ զկալուածս Հայոց առցեն զդրամս իւրեանց։ Յետ այնորիկ ժողովեալ այլազգեաց 'ի դատարան՝ ընթերցան զգիր ազգականաց իւրեանց եւ հռչակեցին 'ի քաղաքին թէ՝ Եղիա եպիսկոպոս Հայոց, որ վերատակար էր քաղաքին եւ վանաց, անկեալ է 'ի փոխանորդութենէ. զայս լուեալ Եղիայի տարեցաւ յոյժ յոյժ, և գրեաց բազում անդամ առ Պատրիարքն և առ ազգապետս զհրաժարումն իւր 'ի պաշտօնէ, յորս յառաջ բերեալ զտառապանս եւ զնեղութիւնս իւր, իբր պաշտպան Աթոռոյն, և կուսակիցք Գարբրիէլի՝ կործանիչք, և ապա մեղադիր լինի, թէ այսքան գրութեանցս և ոչ միոյ պատասխանի արժանի եղէ՝ այլ անկումն իմ լուայ յայլազգեաց ոմանց, որ կողոպտիչ են Աթոռոյն, և այլ սոցին նման երկար բանք. և 'ի վերջոյ աղաչէ չտարագրել զինքն յԱթոռոյ, այլ հեռացեալ յամենայն գործոց իբրեւ զմի 'ի միաբանաց կացցէ աղօթաւոր 'ի սենեկի իւրում։ Ապա Մկրտիչ և Կարապետ եպիսկոպոսունք թերեւս 'ի սադրելոյ բանից Եղիայի, որպէս երեւի, ժողովեալ զմիաբանս վանաց հրաժարեցան և նոքա 'ի գործոց, և այնպէս գրեցին 'ի Կոստանդինուպոլիս թախանձելով զնոսա՝ ընտրել զայլս 'ի տեղի իւրեանց, և կամ տէր լինիլ վանաց և բառնալ զծանրութիւն նորին, բաւական համարելով զվիշտս և զնախատինս զոր կրեցին 'ի սէր Ս. Աթոռոյն և ազգին, և թէ՝ յետս դարձուցանէք զփոխանակագիրն ասեն՝ ցուցէք զտեղի դրամոց, և այլ այսպիսի բանք լցեալ 'ի նամականիս նոցա, ('ի 25 Օգոստոսի)։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս Պատրիարքունք և Ազգապետք ոչ կարացին առ ժամն պատասխանի առնել նամակաց նոցին, զի զբաղեալ էին ամենեքեան վասն բարեկարգութեան Աթոռոյն և ազատութեան 'ի պարտուց, և 'ի